Մեծ. Տօքթորն տասը ամսէն զկնի կրկին կը դառնայ Յեդեսիայ յուրախութիւն և 'ի սփոփանս բոլոր հասարակութեան։

Պարոն նամակագիրն կը յաւելուցնէ թէ, եթէ Պարոն Տօքթորն վերադիշեալ հիւանդութեանց ժամանակ Յեդեսիայ գտնուէր անշուշտ աղքատին այնքան չը պիտի տառապէր եւ կ'եղեքուէր, որոյ մասին տեղւոյն պատրիարքական փոխանորդ Արժ. Կարապետ Վարդապետն եւս վկայելով իւր ինքնագիր ստորագրութեամբ՝ կը խնդրեն հրատարակել Սիօն ամսաթերթի մէջ սոյն վկայութիւնքը 'ի շնորհակալութիւն և յերախտագիտութիւն նորին անշահասէր և մարդասիրական բարեգործութեանց։

Ս. Գ. Ե.

ՅԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹ

ԽԱՉԻ ՃԱՌ ԵՒ ԿՈՐՈՒՍԵԼՈՅ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ

Սոյն վերնագրով, Խրիմեան Հայրիկի աշխատասիրութեամբ և Կիւմիւշ կերտանեան Մեծ. Ռուբէն Էֆէնտի բարեպաշտական սատարութեամբ փոքրիկ մատեան մի հրատարակուած է, որ ընթերցող Քրիստոնէի սիրտն կը վառէ երկնաւոր սիրով, Յիսուսի սիրով, խաչի սիրով, արդարութեան սիրով, ճշմարտութեան սիրով, եղբայրութեան սիրով։ Սոյն երկասիրութիւնն ոչ ցամաք վարդապետական է և ոչ մեկնողական, այլ յորդորական, այլ ներբողական, յորում՝ զմայլմամբ և խանդաղատանօք կը հաշակուի Յիսուսի Քրիստոսի անհուն մարդասիրութիւն, ատտուածային սիրոյ անիմանալի զոհն, խաչի անճառելի ճառն ու իմաստութիւնն, որ յիմարութիւն է կորուսելոց։

Սոյն երկասիրութեան վերայ հաճառօտ գաղափար տալու համար՝ արժան կը համարիմք յառաջաբանն հրատարակել Սիօնի միջոցաւ, յորդորելով մեր ընթերցողներն, որ աշխատին նոյն իսկ երկասիրութիւնն ձեռք բերել կարդալ և քրիստոնէական սիրով լնանիլ։

ՅՈՐԴՈՐ

ԱՌ ԻՄ ՊԱՇՏՕՆԱԿԻՑ ԵՂԲԱՐՍ ԵՒ ԽԱՉԱԿԻՐ ՈՒԽՏՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Յիսուսի խաչին ճառը Ձեզ համար գրեցի եւ Ձեզ կը նուիրեմ, ով խաչին զինուորներ, Աւետարանի պաշտօնեայներ, կենաց բան քարոզողներ եւ Քրիստոսի հօտին հովիւներ. դուք եթէ սիրով կը գրկէք Յիսուսի խաչը և ախորժանօք կընթեռնուք իմ խաչին ճառը. ան ուրեմն, հոգւով հետ ինձ եկէք, երթանք եկնենք Սիօնի վերնատուն. ուր Աւետարանին ուսուցիչ երկնից Վարդապետն կը խոնարհի մինչեւ աշակերտաց ոտքը, կենդանի եւ գործնական օրինակ կ'աւանդէ մեզ և կ'ասէ. «Օրինակ մի ետուս ձեզ. զի և դուք զնոյն առնիջիք»։

Ո՜հ, քանի՞ մեղապարտ եմք այս օրինակին առաջ երբ կը բարձրամտիմք, երբ փառասիրութեան ախտով կախտանամք. Թողուցմ Յիսուսին չափ խոնարհիլ և ընկերին ոտքը լուանալ՝ մեք զմեր ընկերս կ'ոտնհարեմք և կը ջանամք տիրելով ստրկացուցանել Աւետարանի աղատ պաշտօնեայները։

Մտիկ արէք, ով դուք, սէր քարոզող վարդապետներ, Սէրն զսէր կաւանդէ, երկնաթոս վարժապետ սիրոյ

digitised by A.R.A.R.@

դասեր կուսուցանէ. և քանի՞ խնամով կը կրկնէ. «Այս է պատուէրն իմ՝ զի սիրեսջիք զմիմեանս»։

Աւա՜ղ մեզ, ուշամոռաց եղանք. հաղար ուրթ հարիւր տարի է այս դասերն Աւետարանը մեզ կաւանդէ. և մեք կը կորդամք ժողովուրդին. տակաւին ոչ մեք սորվեցանք՝ ոչ ժողովուրդ հասկցաւ. սիրոյ դասը թողինք՝ յատելութիւն կրթեցինք զմեզ, սիրոյ կը տակը տուինք՝ բանսարկուին նախանձն առինք, սերը կորուսինք՝ եւ գրգռիչ թշնամութիւնը գտանք։ Այլ եւս ՝ի մէնջ ո՞վ կը համարձակի սեր քարոզել ժողովուրդին. երբ սիրոյ ճառախօս վարդապետներս՝ սիրել չը գիտեմք, հետ միմեանց ատելութեամբ կը վարիմք. և ի՞նչ մնաց, որ Խաչն ու Աւետարանը մեր գրկէն թողումք, եւ սուր առնելով՝ միմեանց կողը մխեմք։

Մի՞ա գրէք, Յիսուս խաղաղութիւն կուտայ, որ արդէն երանի տուած էր խաղաղարար ոգիներուն. մեք եւս եկեղեցւոյ բեմէն, պատարագի սեղանէն այդ խաղաղութիւնն յաճախ կուտամք ժողովուրդին՝ աջով եւ խաչով տեառնագրելով հանդերձ։ Այլ ի՞նչ է ապա, որ մեր խաղաղութեան ողջոյն՝ խռովութիւն կը դառնայ։ Դորա պատճառն ո՞վ չգիտեր. զի խաղաղութեան պաշտօնեայներն իրարու դէմ խռոված են. մէթէ կարելի՞ է, որ խռովեալ ոգիները՝ խռովելոց խաղաղարար լինին։ Եւ մեք ինչու համար կը խռովիմք, այդ եւս՝ ինքնին յայտնի է. կը խռովիմք փառասիրութեան համար, պաշտօնասիրութեան համար. կը խռովիմք Մովսիսի աթոռ նստելու եւ նախաթոռ լինելու համար, կը խռովիմք Քրիստոսի ազատ եկեղեցին տիրապետելու համար. Աւետարանի և Եկեղեցւոյ խոնարհ ոգին չը ճանչնալով՝ այնպէս կը կարծեմք, որ մեք եւս այս աշխարհս թագն ու գաւազան ունիմք. պաշտօն և պաշտիչ կը պահանջեմք, չը յիշելով մեր հեղ վարդապետին խօսքը. «Որդի մարդոյ եկն ոչ պաշտօն առնուլ. այլ պաշտել եւ տալ զանձն փոխանակ բազմաց»։

Երանի՞ թէ մեք միայն զմեզ խռովէինք և ժողովուրդն անխռով մնար. ո՞չ՝ մեք կը խռովիմք և շատ անգամ եւս անարդ միջոցներն ՝ի գործ դնելով կը խռովեցուցանեմք. և մերթ ևս քանի՞ ամօթ մեզ, երբ ժողովուրդը՝ խաղաղարար կը լինի մեր մէջ, Աւետարանը մեր ձեռքէն առնելով՝ մեր պաշտօնն ՝ի դերերեւ կը հանէ,

Հապա, պաշտօնակից եղբարք իմ, սիրենք, որ խաղաղ մնամք. առնենք մեք նախ Քրիստոսի սէրն ու խաղաղութիւնն, եւ ապա ժողովուրդին տանք։

Սիօնի վերնատունէն իջնամք Գեթսեմանի ձորը. տեսէք Աստուածորդւոյն տագնապին ժամ. տեսէք թէ ի՞նչպէս քիրտն ՝ի յարիւն կ՝աղօթէ. ամենայօժար ոգւով կ՝ընդունի մահուան դառնալի բաժակն, եւ կը խմէ զայն մեղապարտ մարդոյն փրկութեան համար։ Եւ մեք, որ Յիսուսի հետեւող խաչակիրներ եմք՝ արդեօք այս բաժակէն մեզ բաժին չի կա՞յ։ Այո՛, ամեն խաչակիր պաշտօնեայն՝ իւր բաժին ունի. մեք եւս գէթ մի մի կաթիլ խմեմք մեր ժողովուրդին փրկութեան համար։

Ելէք աստի, երթանք հետ Քրիստոսին դատաւորաց առեանը, տեսէք քանի՞ հեղ է մեր վարդապետ. դատաւորներ կ՝որոտան, կայծակներ կը թափեն. նա անխռով կեցած է. վասն զի անմեղն միշտ անխռով է. ժպիրհ ծառայն ապտակ մի կը հանէ ահաւոր և լայս երեսին, ընդ որ Մովսէս ծառայն միայն քարի ծերպէն կը դիտէր։ Հեղու-

digitised by A.R.A.R.@

թիւն չի ցասնար, այլ մեղմով կը պատասխանէ. եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայէ վասն չարին. իսկ թէ բարի՝ ընդէր հարկանես զիս։ Իսկ մեք ոչ եթէ ապտակ, այլ միայն մի սոսկ բան լսելով անհնարին կը ցասնումք և կը զայրանամք. և մերթ եւս պատուաբընդիր լինելով՝ մեր ոսոխը կը վարեմք յատենէ յատեան, որոյ օրինագիրքն Աւետարան չէ։

Ո՛վ խաչակիր զինուորք, առէք իւրաքանչիւր Ձեր խաչերը հետ Քրիստոսին երթանք 'ի Գողգոթա։ Ո՞հ, մեր խաչերը շատ թեթեւ է և մեք յետս կը կասիմք. Յիսուս գնաց հասաւ Բեթլեայ սարին գլուխ և մեք կէս ճամբուն վերայ մնացինք։ Սիմոն Կիւրենացւոյն պէս միայն պահ մի կրեցինք խաչը մեր ուխտին օրը. և դարձեալ զամէն խաչերը դրինք Յիսուսին յուս և մեք յետս դարձանք գնացինք աշխարհին մաճ բռնել. թողինք միանգամայն յետ խաչին՝ նաև կենաց բան և Աւետարանը։

Առէք ձեր խաչեր, մի՛ փախչիք, առէք, ո՛վ խաչաբարձ ուխտ, եթէ կը պարծիմք որ մեք Քրիստոսի զինուորեալ Եկեղեցւոյն յառաջամարտ ու նահատակ զինուորներն եմք. առէք բարձրացուցէք խաչին դրօշ՝ երթամք ժողովուրդին յառաջ։ Ես գիտեմ տրտունջ ունիք և յառաջ կը բերէք Պօղոսին բան. «Ո՞նք զինուորիցի իւրով թոշակաւ»։ Այլ մեր զօրագլուխ Յիսուսը զինուորեցաւ. իւր թոշակը՝ միայն Աւետարանն էր եւ Տիբերիան ծովուն ձրիատուր ձկներն։ Պօղոսն եւս նոյն օրինակ զինուորեցաւ. նա արուեստիւ վրանակար էր, եւ պարծենալով կ'ասէր, ես ձեռարուեստովս պաշտեցի իմ առաքելակից ընկերներս։ Թէ ամօթ է վրան կարել. ուրեմն թուղթ գրենք, գիրք շինենք, ուսման պարապինք և մեր թոշակով զինուորիմք։

Յիսուս խաչով եկաւ Գողգոթային գլուխ. մեք առանց խաչի ու վշոյ երթամք ինչպէս դասալիք աշակերտներն, երթանք գտնէ միայն աչքով հանգիստես լինիմք. զի մեր փրկութեան զոհարան է հոն։ Տեսէք որչափ անմտութիւն է, ինչպէս որոյն իւր կը տրրչին առաջ՝ իւր փրկող բաղուկները՝ փայտին վերայ ինքնայօժար կը տարածէ, և կ'ասէ, Բարձրացուցէք զիս, որ զաշխարհ բովանդակ առ իս ձգեմ։

Այսպէս ահա 'ի մարդ կերպարանեալ Սէրն Աստուծոյ՝ իւր անհուն և մեծ սիրով զանձն իւր հաւատացեալ քարեկամներուն վերայ կը դնէ, և կը մեռնի խաչին վերայ և 'ի մեզս մեռելոց՝ կեանք կուտայ։

Յիսուս իւր խաչով և սիրով հեռացեալ մարդիկներն առ ինքն կը ժողովէ և մեք առանց սիրոյ և խաչի կը ցրուեմք դայն. և մեզ համար խօսեցաւ նա կանխաւ. թէ «Որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ»։ Ո՛վ կարող է առանց խաչի և սիրոյ Յիսուսի հետ ժողովել. զի նորա ժողովելու հեծանոյն խաչն էր միայն. ինչպէս ասաց և վկայեց իւր Մկրտիչն։

Արդ եթէ այնպէս կը հաւատամք ինչպէս կը բարձրախօսէ Պօղոսն, թէ Խաչին ճառը՝ կորուսեալ անհաւատից համար յիմարութիւն է. այլ մեզ համար, որ հաւատով փրկուած եմք՝ Աստուծոյ զօրութիւնն է։

Զօրանամք ուրեմն Խաչի ճառի զօրութեամբ եւ զօրացուցանեմք տկարամիտներն. որոց դէմ այժմ 'ի կռիւ ելած են աշխարհ, մամոնայն և նիւթապաշտ փիլիսոփայութիւն։ Մեք Պօղոսին պէս մեր խաչով պարծինք, որով աշխարհ մեզ համար 'ի խաչ ելած է և մեք աշխարհին, և երանի՜ թէ տիրապէս այսպէս լինէր և կարենայինք պարծել։

digitised by A.R.A.R.@

Խաչակրաց խմբէն բանիս դէմ առ ձեզ կը դարձնեմ և կ'աւարտեմ յորդորս, ով հաւատացեալ ժողովուրդ, դուք որ Խաչին կը հաւատայք և աշխարհի խաչակրութեան մէջ կը տառապիք, այնպէս մի՛ կարծէք թէ խաչին պարտիքը՝ միայն կղերական դասուն բեռն է, և ժողովուրդն ազատ է։ Ո՛չ, ո՛չ, խաչն՝ Քրիստոնեայ անուն կրողաց ու զինուորաց առ հասարակ անխուսափելի և նուիրական պարտիքն է։ Դուք եւս ձեր խաչերն ունիք, զոր աշխարհիս բռնութիւնն միշտ կը պատրաստէ ձեզ համար. և դուք կարող չէք ձեր թիկանց վերայէն խաչին բեռն իսպառ թօթափել, զի Քրիստոս ասաց. «Յաշխարհի ասա նեղութիւն ունիցիք»։ Թեպէտ աշխարհիս քաղաքակրթութիւն զօրհանապաղ կը տքնի և կը ճգնի խաչն բառնալ ձեր թիկունքէն, որուն տակ կը հեծէք ալիոզորմ։

Սակայն ով կը հաւատայ, որ վերոյսուին բռնութիւններ եւ խաչն աշխարհէս բարձուի, ժողովուրդն ազատ ու երջանիկ ապրի. հաւատարութիւն տիրէ, աղքատին խրճիթն՝ հարուստին ապարանից բարձրութեան հետ հաւասարի, փողոցի աղքատ Ղազարոս՝ բեհեղ ու ծիրանի հագնի եւ մեծատան հետ սեղանակից նստի։

Զեմք ժխտեր սակայն եթէ ճշմարիտ քաղաքակրթութիւնն Աւետարանի ընկերակիրութեան և ոգեանց վերայ յառաջ կը վարէ իւր մեծամեծ ձեռնարկութիւնները. ժողովուրդին խաչն միայն կը թեթեւնայ, բայց ոչ իսպառ կը բարձուի։

Առէք ուրեմն, ով ժողովուրդ Հայոց, առէք ձեր խաչեր, կարդացէք Խաչին ճառը, սիրով ու հաւատով տարէք ձեր ծանրակիր խաչեր, խաչով եղէք Գողգոթային գլուխ, խաչով մտէք 'ի գերեզման, խաչով եղէք յերկինս առ Յիսուս, որ կը կոչէ առ ինքն իւր ամէն կորիճ խաչակիրներն. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ»։

ՀԱՄԱՌՕՏ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

Մեծ. Պ. Մ. Մամուրեան, որ Հայկական արդեան Գրականութեան գործունի մշակներէն ամենէն անխոնջն է և արդիւնաշատն, Ընդհանուր Պատմութեան Դասագիրք մի կ'ընծայէ Հայ Դպրոցներուն, որ իւր ամփոփ պարունակութեամբ, պատմական ուսանելեաց հասուն ընտրութեամբ ու պատշաճ դասաւորութեամբ մեծ առաւելութիւններ ունի ցարդ հրատարակուած նմանօրինակ Դասագրքերէն։ Առ այժմ սոյն կարի պիտանի երկասիրութեան Ա. Հատորոյ Ա. Մասն միայն հրատարակուած է, որ կը պարունակէ Արեւելքի հին ժողովրդոց պատմութիւնն, մի գեղեցիկ ներածութեամբ հանդերձ։

Որչափ փափաքելի էր, եթէ Պատմութեան այսպիսի մի ընտիր Դասագիրք ունենար նաեւ իւր պատմական Աղբասն, այն է պատմական — աշխարհագրական տախտակներն, որք պատմական ուսումն զգալի կերպիւ կը դիւրացնեն ուսանողաց համար, պատկերացնելով նոցա առջեւ պատմական մեծ անցից և շրջանաց հոլովման, փոփոխման և յաջորդութեան գլխաւոր հետքերն, որոնք դարուց 'ի դարս դրոշմուել են երկրագ'դիս վերայ։ Բայց ով կարող

digitised by A.R.A.R.@